ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 436. Շինությունների և փաստաթղթերի անձեռնմխելիությունը

1. Դիվանագիտական ներկայացուցչության զբաղեցրած շենքը, դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի նստավայրը, դիվանագիտական անձնակազմի անդամների բնակելի շինությունները, նրանց գույքը և փոխադրամիջոցներն անձեռնմխելի են: Այդ շինություններ մուտք գործել, ինչպես նաև այնտեղ ապացուցողական և վարութային այլ գործողություններ կատարել թույլատրվում է միայն դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի կամ այդ պաշտոնն զբաղեցնող անձի համաձայնությամբ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումները փոխադարձության սկզբունքի հիման վրա տարածվում են դիվանագիտական ներկայացուցչության վարչական-տեխնիկական անձնակազմի աշխատակիցների և նրանց ընտանիքների հետ համատեղ բնակվող անդամների զբաղեցրած բնակելի շինությունների վրա, եթե նշված անձինք և նրանց ընտանիքների անդամները Հայաստանի Հանրապետության քաղաքացի չեն և մշտապես չեն բնակվում Հայաստանի Հանրապետությունում:

3. Հյուպատոսական հիմնարկների զբաղեցրած շենքը և հյուպատոսական հիմնարկների ղեկավարների նստավայրը փոխադարձության սկզբունքի հիման վրա անձեռնմխելի են: Այդ շինություններ մուտք գործելը, ինչպես նաև այնտեղ ապացուցողական և վարութային այլ գործողություններ կատարելը թույլատրվում են միայն դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկների ղեկավարների խնդրանքով կամ համաձայնությամբ:

4. Դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների արխիվը, փաստաթղթերը, պաշտոնական գրությունները անձեռնմխելի են: Դիվանագիտական փոստը չի կարող վերահսկվել կամ առգրավվել:

5. Դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների ղեկավարների համաձայնությունը սույն հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված դեպքերում վարույթն իրականացնող մարմիններն ստանում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարությանարտաքին գործերի նախարարության միջոցով:

6. Սույն հոդվածով սահմանված շինություններում զննությունը, խուզարկությունը, առգրավումը, ձերբակալումը և կալանավորումը կատարվում են հսկող դատախազի և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի և միջազգային առևտրիարտաքին գործերի նախարարության նախարարության ներկայացուցչի ներկայությամբ: